ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ ___________________

« _____ » _______________ 2021թ.

«ԹՐԱՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՀԿ-Ի
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ
ՏԻԿԻՆ Ս.ԱՎԱԳՅԱՆԻՆ

........................................................

էլ.փոստ՝ info@transparency.am

Ձեր 2021 թվականի փետրվարի 19-ի թիվ 21/15-67 գր.

Հարգելի տիկին Ավագյան.

Ձեզ եմ տրամադրում լրացված հարցաշարերը:

Առդիր՝ 5 էջ:

2/23/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

կատ. Ա. Ադլոյան
հեռ. /0322/ 2-10-24

**Հարցաշար**

***<u>Ներքին և արտաքին ազդարարման պատասխանատուների մասով</u>***

1. Ձեր կողմից ղեկավարվող կառույցում ե՞րբ են նշանակվել արտաքին և ներքին ազդարարման հարցերով պատասխանատուները, խնդրում ենք նշել իրավական ակտի տվյալները:
   **Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2018թ-ի հունիսի 22-ի թիվ 158-Ա և 2020թ-ի մայիսի 11-ի թիվ 390-Ա հրամաններ**
2. Ձեր կողմից ղեկավարվող կառույցի արտաքին և ներքին ազդարարման պատասխանատուների վերաբերյալ տվյալները առկա՞ են արդյոք Ձեր կառույցի պաշտոնական կայքէջում: Խնդրում ենք ներկայացնել հղումը: **(հղումը՝ այստեղ)**
3. Նշանակումից ի վեր Ձեր կառույցի արտաքին և ներքին ազդարարման պատասխանատուն անցե՞լ է արդյոք մասնագիտական վերապատրաստման դասընթաց, ի՞նչ ժամաքանակով և ծավալով;
   **Վերապատրաստումներ չեն իրականացվել**
4. Որպես իրավասու մարմին՝ Ձեր կառույցի կողմից հաստատվա՞ծ է արդյոք ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման, ձևակերպման, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման կարգը: Խնդրում ենք նշել իրավական ակտի տվյալները և կառույցի կայքում հրապարակման առկայության մասին հղումը;
   **Կարգ չի մշակվել**
5. Ձեր կառույցի ազդարարման պատասխանատուն 2020թ. ընթացքում քանի՞ հաղորդում է ստացել ներքին ազդարարման վերաբերյալ: Ի՞նչ ընթացք են ստացել մուտքագրված դիմումները, դրանցից քանիսի՞ վերաբերյալ են հայտնաբերվել հանցագործության առերևույթ հատկանիշներ:
   **Հաղորդումներ չեն ստացվել**
6. Ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել ներքին ազդարարման ժամանակ ազդարարի պաշտպանվածությունը ապահովելու ուղղությամբ:
   **Ազդարարման դեպքում ներքին ազդարարի անձնական տվյալները չբացահայտելու նպատակով փաստաթղթաշրջանառությունը կատարվելու Լոռու մարզպետարանի ազդարարման պատասխանատու անձի միջոցով:**
7. Ձեր կառույցի ազդարարման պատասխանատուն 2020թ. ընթացքում քանի՞ հաղորդում է ստացել արտաքին ազդարարման վերաբերյալ: Ի՞նչ ընթացք են ստացել ստացված դիմումները, դրանցից քանիսի՞ վերաբերյալ են հայտնաբերվել հանցագործության առերևույթ հատկանիշներ:
   **Հաղորդումներ չեն ստացվել**
8. Ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել արտաքին ազդարարման ժամանակ ազդարարի պաշտպանվածությունը ապահովելու ուղղությամբ:

**Ազդարարման դեպքում արտաքին ազդարարի անձնական տվյալները չբացահայտելու նպատակով փաստաթղթաշրջանառությունը կատարվելու Լոռու մարզպետարանի ազդարարման  պատասխանատու անձի միջոցով:**

9. Արձանագրվե՞լ են արդյոք ոչ իրավասու մարմնին ազդարարի կողմից հաղորդում ներկայացնելու դեպքեր: Նման քանի՞ դեպք է հաշվառվել և ի՞նչ ընթացք է ստացել հաղորդումը:
   **Հաղորդումներ չեն ստացվել**

10. Արձանագրվե՞լ են ազդարարի կողմից  օրենքով նախատեսված կարգով հաղորդում ներկայացնելիս անբարեխիղճ գործունեության դեպքեր: Նման քանի՞ դեպք է արձանագրվել և ի՞նչ ընթացք է ստացել հաղորդումը:
    **նման դեպքեր չեն արձանագրվել**

***<u>Բարեվարքության հարցերով կազմակերպչի մասով</u>***

1. Ձեր կողմից ղեկավարվող կառույցում ե՞րբ է նշանակվել բարեվարքության հարցերով կազմակերպիչը, խնդրում ենք նշել իրավական ակտի  տվյալները:
   **Լոռու մարզպետարանի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը պաշտոնների գնահատումից հետո հաստատվել է ՀՀ Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2019թվականի դեկտեմբերի 25-ին թիվ 1881 հրամանով: 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1884 հրամանի թիվ 82 հավելվածով հաստատվել է բարեվարքության հարցերով կազմակերպչի պաշտոնի անձնագիրը: 2019թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1956 հրամանով այդ պաշտոնում նշանակվել է ՀՀ Լոռու մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ Կարինե Հրաչիկի Ադամյանը:**

2. Ձեր կողմից ղեկավարվող կառույցի բարեվարքության հարցերով կազմակերպչի վերաբերյալ տվյալները առկա՞ են արդյոք Ձեր կառույցի պաշտոնական կայքէջում: Խնդրում ենք նշել  համապատասխան հղումը համացանցում:
   **Լոռու մարզպետարանի հաստիքացուցակը, ինչպես նաև պաշտոնների գնահատումից և վերանշանակումներից հետո գլխավոր քարտուղարի բոլոր հրամանները տեղադրվել են Լոռու մարզպետարանի կայքէջում:**
   **<u>հաստիքացուցակ</u>**

3. Նշանակումից ի վեր բարեվարքության հարցերով կազմակերպիչն անցե՞լ է մասնագիտական վերապատրաստման դասընթաց, ի՞նչ ժամաքանակով և ծավալով;
   **ՀՀ Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2019թվականի ապրիլի 26-ի թիվ 551 հրամանով Կ. Ադամյանը անցել է վերապատրաստում «Բարեվարքության հարցերով կազմակերպիչներին անհրաժեշտ**

**հմտություններ» թեմայով 2019թվականի մայիսի 2-3՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայում, ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի գրության հիման վրա:**

4. Նշանակումից ի վեր, Ձեր կառույցի բարեվարքության հարցերով կազմակերպիչը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից կամ ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակից ինչպիսի մեթոդական և մասնագիտական աջակցություն է ստացել ուղեցույցների, առանձին հրահանգների, նամակների տեսքով՝ հանրային ծառայողների վարքագծի կանոնագրքի, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, շահերի բախման իրավիճակների պարզաբանման ուղղությամբ:
   **Մեթոդական և մասնագիտական ուղեցույցնել չեն ստացվել:**

5. Նշանակումից ի վեր Ձեր կառույցի բարեվարքության հարցերով կազմակերպիչը հանրային ծառայողներին ի՞նչ ծավալի (դեպքերի քանակ և նկարագրություն) մասնագիտական խորհրդատվություն է տրամադրել անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների վերաբերյալ:
   **Ծանոթացրել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված անհամատեղելիության պահանջներին:**
6. Նշանակումից ի վեր Ձեր կառույցի բարեվարքության հարցերով կազմակերպիչը կառույցի հանրային ծառայողներին և պաշտոնատար անձանց շահերի բախման իրավիճակի լուծման ինչպիսի՞ և քանի՞ դեպքերի վերաբերյալ է առաջարկություններ ներկայացրել:
   **Առաջարկություններ չեն ներկայացվել:**
7. Ձեր կառույցի բարեվարքության հարցերով կազմակերպչի կողմից իրականացված 2020 և 2021թթ․ հանրային ծառայողների բարեվարքության վերապատրաստման կարիքների բացահայտման արդյունքում ինչպիսի՞ վերապատրաստման ծրագրերի անհրաժեշտություն եք տեսնում (թվարկել առանցքային վերապատրաստման կարիքները):
   **«Բարեվարքության համակարգի տարրերը», «Անհամատեղելիության պահանջները», «Շահերի բախում»**

8. Ձեր կամ կառույցի գլխավոր քարտուղարի կողմից հաստատվա՞ծ են արդյոք կառույցի հանրային ծառայողների բարեվարքության պահանջների պահպանմանն ուղղված վերապատրաստման ծրագրերը:
   **2021թ.վերապատրաստման ծրագրերը գտնվում են մշակման փուլում:**
9. Ձեր կամ կառույցի գլխավոր քարտուղարի կողմից հաստատվա՞ծ են արդյոք կառույցի  կոռուպցիոն ռիսկերի գնահատման միջոցով բարեվարքության պլանների մշակման վերաբերյալ առաջադրանքները:

**Դեռևս ոչ:**

10. Ձեր կառույցի բարեվարքության հարցերով կազմակերպիչը կառույցի գլխավոր քարտուղարի, կամ Կոռուպցիայի կանախարգելման հանձնաժողովի, կամ էթիկայի հանձնաժողովի առաջարկով 2020թ. բարեվարքության համակարգին առնչվող ի՞նչ ուսումնասիրություններ է իրականացրել:

    **Նման առաջարկներ չեն եղել:**

11. Ձեր կառույցի բարեվարքության հարցերով կազմակերպիչը 2020թ. ընթացքում քանի՞ դիմում է ստացել հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ: Ստացված դիմումների (ներքին կամ արտաքին) վերաբերյալ վարվու՞մ է արդյոք վիճակագրություն: Ի՞նչ ընթացք են ստացել մուտքագրված դիմումները:

    **Նման բովանդակությամբ դիմումներ չեն ստացվել:**

12. Դուք՝ որպես կառույցի ղեկավար կամ ձեր կառույցի գլխավոր քարտուղարը ի՞նչպիսի քայլեր եք ձեռնարկել բարեվարքության հարցերով կազմակերպչի բնականոն գործունեության ապահովման և բարեվարքության համակարգի ներդրման ուղղությամբ:

***Էթիկայի հանձնաժողովների մասով***

1. Ե՞րբ է ձևավորվել Ձեր կողմից ղեկավարվող կառույցին սպասարկող էթիկայի (կարգապահական) հանձնաժողովը և ինչ իրավական հիմքով: **«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետ:**
2. Ձեր կողմից ղեկավարվող կառույցին սպասարկող էթիկայի (կարգապահական) հանձնաժողովի և նրա անդամների վերաբերյալ տվյալները ե՞րբ են տեղադրվել Ձեր կառույցի պաշտոնական կայքէջում: Խնդրում ենք նշել համապատասխան հղումը համացանցում: **(հղումը՝ այստեղ և այստեղ)**
3. էթիկայի (կամ կարգապահական ) հանձնաժողովը 2020թ. ընթացքում քանի՞ դիմում է ստացել անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, վարքագծի կանոնների, շահերի բախման իրավիճակների խախտումների վերաբերել:

    **Դիմում չի ստացվել**

4. Էթիկայի (կարգապահական) հանձնաժողովի կողմից տրված եզրակացության հիման վրա ինչպիսի՞ պատասխանատվության միջոցներ են կիրառվել վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, շահերի բախման իրավիճակների պայմանների խախտումների համար: Խնդրում ենք ներկայացնել կոնկրետ վիճակագրական տվյալներ՝ ըստ դեպքերի:

    **Էթիկայի հանձնաժողովի կողմից եզրակացություն չի տրվել**

5. Էթիկայի (կարգապահական) հանձնաժողովի անդամները 2020թ․ անցե՞լ են արդյոք մասնագիտական վերապատրաստման դասընթացներ: Դրական պատասխանի դեպքում խնդրում ենք նշել դասընթացի թեման և ժամաքանակը:
   **մասնագիտական վերապատրաստման դասընթացներ չեն կազմակերպվել**
6. Դուք՝ որպես կառույցի ղեկավար, 2020թ․ ընթացքում էթիկայի (կարգապահական) հանձնաժողովից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների և շահերի բախման իրավիճակների լուծման ուղղությամբ ի՞նչ քանակի և ուղղվածության առաջարկություններ եք ստացել:
   **Առաջարկություններ չեն ստացվել**
7. Ձեր կողմից ղեկավարվող կառույցը և  էթիկայի (կարգապահական) հանձնաժողովը 2020թ․ ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի տիպային կանոնների վերաբերյալ ի՞նչպիսի մասնագիտական խորհրդատվություն և մեթոդական աջակցություն է ստացել: Խնդրում ենք կոնկրետ նկարագրել:
   **մասնագիտական խորհրդատվություն և մեթոդական աջակցություն չի ստացվել**
8. Ձեր կողմից ղեկավարվող կառույցի պետական կամ համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց մասով Կոռուպցիայի կանախարգելման հանձնաժողովի կողմից 2020թ․ ընթացքում քանի՞ դեպքերով են ստացվել պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ, ինչպես նաև շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություններ:
   **հանձնաժողովի կողմից առաջարկություններ չեն եղել**
9. Դուք՝ որպես կառույցի ղեկավար կամ ձեր կառույցի գլխավոր քարտուղարը ի՞նչ քայլեր եք ձեռնարկել էթիկայի հանձնաժողովի բնականոն գործունեության ապահովման և բարեվարքության համակարգի ներդրման ուղղությամբ:
   **Էթիկայի հանձնաժողովի անդամների Լոռու մարզպետարանի ներկայացուցիչների ցուցակը ներկայացվել է ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ:**

# **Հարցաշար**

***<u>Ներքին և արտաքին ազդարարման պատասխանատուների մասով</u>***

1. Ձեր կողմից ղեկավարվող կառույցում ե՞րբ են նշանակվել արտաքին և ներքին ազդարարման հարցերով պատասխանատուները, խնդրում ենք նշել իրավական ակտի տվյալները:
2. Ձեր կողմից ղեկավարվող կառույցի արտաքին և ներքին ազդարարման պատասխանատուների վերաբերյալ տվյալները առկա՞ են արդյոք Ձեր կառույցի պաշտոնական կայքէջում: Խնդրում ենք ներկայացնել հղումը:
3. Նշանակումից ի վեր Ձեր կառույցի արտաքին և ներքին ազդարարման պատասխանատուն անցե՞լ է արդյոք մասնագիտական վերապատրաստման դասընթաց, ի՞նչ ժամաքանակով և ծավալով;
4. Որպես իրավասու մարմին՝ Ձեր կառույցի կողմից հաստատվա՞ծ է արդյոք ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման, ձևակերպման, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման կարգը: Խնդրում ենք նշել իրավական ակտի տվյալները և կառույցի կայքում հրապարակման առկայության մասին հղումը;
5. Ձեր կառույցի ազդարարման պատասխանատուն 2020թ. ընթացքում քանի՞ հաղորդում է ստացել ներքին ազդարարման վերաբերյալ: Ի՞նչ ընթացք են ստացել մուտքագրված դիմումները, դրանցից քանիսի՞ վերաբերյալ են հայտնաբերվել հանցագործության առերևույթ հատկանիշներ:
6. Ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել ներքին ազդարարման ժամանակ ազդարարի պաշտպանվածությունը ապահովելու ուղղությամբ:
7. Ձեր կառույցի ազդարարման պատասխանատուն 2020թ. ընթացքում քանի՞ հաղորդում է ստացել արտաքին ազդարարման վերաբերյալ: Ի՞նչ ընթացք են ստացել ստացված դիմումները, դրանցից քանիսի՞ վերաբերյալ են հայտնաբերվել հանցագործության առերևույթ հատկանիշներ:
8. Ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել արտաքին ազդարարման ժամանակ ազդարարի պաշտպանվածությունը ապահովելու ուղղությամբ:

9. Արձանագրվե՞լ են արդյոք ոչ իրավասու մարմնին ազդարարի կողմից հաղորդում ներկայացնելու դեպքեր: Նման քանի՞ դեպք է հաշվառվել և ի՞նչ ընթացք է ստացել հաղորդումը:
10. Արձանագրվե՞լ են ազդարարի կողմից օրենքով նախատեսված կարգով հաղորդում ներկայացնելիս անբարեխիղճ գործունեության դեպքեր: Նման քանի՞ դեպք է արձանագրվել և ի՞նչ ընթացք է ստացել հաղորդումը:

***<u>Բարեվարքության հարցերով կազմակերպչի մասով</u>***

1. Ձեր կողմից ղեկավարվող կառույցում ե՞րբ է նշանակվել բարեվարքության հարցերով կազմակերպիչը, խնդրում ենք նշել իրավական ակտի տվյալները:
2. Ձեր կողմից ղեկավարվող կառույցի բարեվարքության հարցերով կազմակերպչի վերաբերյալ տվյալները առկա՞ են արդյոք Ձեր կառույցի պաշտոնական կայքէջում: Խնդրում ենք նշել համապատասխան հղումը համացանցում:
3. Նշանակումից ի վեր բարեվարքության հարցերով կազմակերպիչն անցե՞լ է մասնագիտական վերապատրաստման դասընթաց, ի՞նչ ժամաքանակով և ծավալով;
4. Նշանակումից ի վեր, Ձեր կառույցի բարեվարքության հարցերով կազմակերպիչը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից կամ ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակից ինչպիսի մեթոդական և մասնագիտական աջակցություն է ստացել ուղեցույցների, առանձին հրահանգների, նամակների տեսքով՝ հանրային ծառայողների վարքագծի կանոնագրքի, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, շահերի բախման իրավիճակների պարզաբանման ուղղությամբ:
5. Նշանակումից ի վեր Ձեր կառույցի բարեվարքության հարցերով կազմակերպիչը հանրային ծառայողներին ի՞նչ ծավալի (դեպքերի քանակ և նկարագրություն) մասնագիտական խորհրդատվություն է տրամադրել անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների վերաբերյալ :
6. Նշանակումից ի վեր Ձեր կառույցի բարեվարքության հարցերով կազմակերպիչը կառույցի հանրային ծառայողներին և

պաշտոնատար անձանց շահերի բախման իրավիճակի լուծման ինչպիսի՞ և քանի՞ դեպքերի վերաբերյալ է առաջարկություններ ներկայացրել:

7. Ձեր կառույցի բարեվարքության հարցերով կազմակերպչի կողմից իրականացված 2020 և 2021թթ. հանրային ծառայողների բարեվարքության վերապատրաստման կարիքների բացահայտման արդյունքում ինչպիսի՞ վերապատրաստման ծրագրերի անհրաժեշտություն եք տեսնում (թվարկել առանցքային վերապատրաստման կարիքները):
8. Ձեր կամ կառույցի գլխավոր քարտուղարի կողմից հաստատվա՞ծ են արդյոք կառույցի հանրային ծառայողների բարեվարքության պահանջների պահպանմանն ուղղված վերապատրաստման ծրագրերը:
9. Ձեր կամ կառույցի գլխավոր քարտուղարի կողմից հաստատվա՞ծ են արդյոք կառույցի կոռուպցիոն ռիսկերի գնահատման միջոցով բարեվարքության պլանների մշակման վերաբերյալ առաջադրանքները:
10. Ձեր կառույցի բարեվարքության հարցերով կազմակերպիչը կառույցի գլխավոր քարտուղարի, կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, կամ Էթիկայի հանձնաժողովի առաջարկով 2020թ. բարեվարքության համակարգին առնչվող ի՞նչ ուսումնասիրություններ է իրականացրել:
11. Ձեր կառույցի բարեվարքության հարցերով կազմակերպիչը 2020թ. ընթացքում քանի՞ դիմում է ստացել հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ: Ստացված դիմումների (ներքին կամ արտաքին) վերաբերյալ վարվու՞մ է արդյոք վիճակագրություն: Ի՞նչ ընթացք են ստացել մուտքագրված դիմումները:
12. Դուք՝ որպես կառույցի ղեկավար կամ ձեր կառույցի գլխավոր քարտուղարը ի՞նչպիսի քայլեր եք ձեռնարկել բարեվարքության հարցերով կազմակերպչի բնականոն գործունեության ապահովման և բարեվարքության համակարգի ներդրման ուղղությամբ:

***Էթիկայի հանձնաժողովների մասով***

1. Ե՞րբ է ձևավորվել Ձեր կողմից ղեկավարվող կառույցին սպասարկող էթիկայի (կարգապահական) հանձնաժողովը և ինչ իրավական հիմքով:
2. Ձեր կողմից ղեկավարվող կառույցին սպասարկող էթիկայի (կարգապահական) հանձնաժողովի և նրա անդամների վերաբերյալ տվյալները ե՞րբ են տեղադրվել Ձեր կառույցի պաշտոնական կայքէջում: Խնդրում ենք նշել համապատասխան հղումը համացանցում:
3. Էթիկայի (կամ կարգապահական) հանձնաժողովը 2020թ. ընթացքում քանի՞ դիմում է ստացել անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, վարքագծի կանոնների, շահերի բախման իրավիճակների խախտումների վերաբերյալ:
4. Էթիկայի (կարգապահական) հանձնաժողովի կողմից տրված եզրակացության հիման վրա ինչպիսի՞ պատասխանատվության միջոցներ են կիրառվել վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, շահերի բախման իրավիճակների պայմանների խախտումների համար: Խնդրում ենք ներկայացնել կոնկրետ վիճակագրական տվյալներ՝ ըստ դեպքերի:
5. Էթիկայի (կարգապահական) հանձնաժողովի անդամները 2020թ. անցե՞լ են արդյոք մասնագիտական վերապատրաստման դասընթացներ: Դրական պատասխանի դեպքում խնդրում ենք նշել դասընթացի թեման և ժամաքանակը:
6. Դուք՝ որպես կառույցի ղեկավար, 2020թ. ընթացքում էթիկայի (կարգապահական) հանձնաժողովից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների և շահերի բախման իրավիճակների լուծման ուղղությամբ ի՞նչ քանակի և ուղղվածության առաջարկություններ եք ստացել:
7. Ձեր կողմից ղեկավարվող կառույցը և էթիկայի (կարգապահական) հանձնաժողովը 2020թ. ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի տիպային կանոնների վերաբերյալ ի՞նչպիսի մասնագիտական

խորհրդատվություն և մեթոդական աջակցություն է ստացել: Խնդրում ենք կոնկրետնկարագրել:

8. Ձեր կողմից ղեկավարվող կառույցի պետական կամ համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց մասով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից 2020թ. ընթացքում քանի՞ դեպքերով են ստացվել պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ, ինչպես նաև շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություններ:

9. Դուք՝ որպես կառույցի ղեկավար կամ ձեր կառույցի գլխավոր քարտուղարը ի՞նչ քայլեր եք ձեռնարկել էթիկայի հանձնաժողովի բնականոն գործունեության ապահովման և բարեվարքության համակարգի ներդրման ուղղությամբ: